ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման անհրաժեշտության մասին

Ներկա վիճակը և առկա խնդիրները.

Ելնելով դատավարական օրենքներով սահմանված կարգավորումներից և ձևավորված իրավակիրառ պրակտիկայից՝ վճռաբեկ դատարանը ներկայումս պատճառաբանում է միայն բողոքները վերադարձնելու մասին որոշումները և ընդհանրապես չի պատճառաբանում վարույթ ընդունելու մասին որոշումները (դատավարական օրենքներում բացակայում է նման օրենսդրական պահանջ), իսկ վճռաբեկ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերում, որպես կանոն, չի պատճառաբանում, թե ինչ հիմքով և պատճառաբանությամբ է վճռաբեկ դատարանը կոնկրետ բողոքը ընդունել վարույթ:

Այսպես որևիցե դատավարական օրենք վճռաբեկ դատարանի գործն ըստ էության լուծող որոշման պարդատիր տարր չի սահմանում կոնկրետ բողոքը վարույթ ընդունելու հիմքի պատճառաբանումը:

Արդյունքում վճռաբեկ դատարանի կողմից կոնկրետ գործով կայացվող որևիցե որոշման մեջ չի պատճառաբանվում է, թե ինչու է վճռաբեկ դատարանը կոնկրետ բողոքը ընդունել իր վարույթ և ինչ հիմքով:

Նշված կարգավորումը դատավարության մասնակիցների մոտ կարող է հանգեցնել այն եզրահանգման, որ վճռաբեկ դատարանը ներկայացված բողոքները վարույթ է ընդունում կամայականորեն՝ վարույթ ընդունելու հիմքերի բացակայության պայմաններում կամ առանց վարույթ ընդունելու հիմքերի հարցի լուծման:

Վճռաբեկ բողոքը քննության (վարույթ) ընդունելու հարցը լուծելիս ինչպես օրենքով նախատեսված ֆորմալ պահանջներին (որոնք ըստ էության համահունչ են վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջներին) վճռաբեկ բողոքի համապատասխանության հարցը, այնպես էլ վարույթ ընդունելու բովանդակային հիմքերի առկայության հարցը լուծվում են միաժամանակ, և հետևաբար՝ դատավորների նույն կազմի կողմից: Ընդ որում դատավարական օրենքներով նախատեսված է, որ այդ հարցը որոշվում է վճռաբեկ դատարանի համապատասխան պալատի անդամների առնվազն կեսի կողմից, իսկ իրավակիրառ պրակտիկայում՝ ամբողջ պալատի կողմից:

Գտնում ենք նշված կարգավորումն նպաստում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցի լուծման ժամանակ վճռաբեկ դատարանի դատավորների գերծանրաբեռնվածությանը:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը նախատեսված են ինչպես ՀՀ դատական օրենսգրքում, այնպես էլ դատավարական օրենսգրքերում: Ընդ որում նշված 4 օրենսդրական ակտերում էլ դրանք նույնն են:

Դրանք են՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար.

2) վերանայվող դատական ակտն առերևույթ (prima facie) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին.

3) ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

Կարծում ենք նշված հիմքերի առումով առկա են հետևյալ թերությունները՝

1. Վարույթ ընդունելու երկրորդ հիմքը՝ վերանայվող դատական ակտն առերևույթ (prima facie) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումները, ուղղակիորեն պայմանավորված է օրենքի միատեսակ կիրառելու վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթի իրականացման անհրաժեշտությամբ և հնարավորություն է տալիս վճռաբեկ դատարանին հետևողական լինել ստորադաս դատարանների կողմից իր կայացրած որոշումների կատարման հարցում:

Այսինքն նշված հիմքն, ըստ էության, վարույթ ընդունելու առաջին հիմքի (բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար) տարատեսակ է:

2. Նշված հիմքերը չափազանց ընդհանուր են ձևակերպված: Օրենսդրական ակտերում սահմանված չէ, թե ինչ պայմանների դեպքում ներկայացված բողոքը վարույթ ընդունելը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար կամ ինչի հիման վրա պետք է որոշվի ծանր հետևանքներ առաջացնող առերևույթ դատական սխալը:
3. Վարույթ ընդունելու բովանդակային հիմքերը տարբեր դատավարություններում չեն կարող լինել միևնույն, քանի որ առնվազն տարբեր են այդ դատավարություններում ծանր հետևանքներ առաջացնող առերևույթ դատավարական սխալները:

ՀՀ գործող քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերով նախատեսված է միայն բողոքը վերադարձնելու որոշումը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենքով ինչպես բողոքը վերադարձնելու, այնպես էլ առանց քննության թողնելու մասին որոշումը: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու բովանդակային հիմքերին չհամապատասխանելու հիմքով վերադարձվելու դեպքում վճռաբեկ դատարանը կայացնում «վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում», որը մեր կարծիքով նույնպես ճիշտ չէ: Ուստի անհրաժեշտ է օրենդրական փոփոխությունների միջոցով շտկել այդ թերությունները:

Առաջարկվող լուծումները.

Առաջարկվում է օրենսդրորեն նախատեսել, որ վճռաբեկ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտում պարտավոր է նշել, թե վճռաբեկ դատարանը կոնկրետ գործով ներկայացված բողոքն ինչ հիմքով է ընդունել վարույթ՝ մանրամասն հիմնավորելով ներկայացված բողոքում վարույթ ընդունելու հիմքերի առկայությունը:

Նշված հանգամանքը ավելի կանխատեսելի կդարձնի վճռաբեկ դատարանի գործունեությունը և կբարձրացնի բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումների նկատմամբ վստահությունը:

Նշված խնդրի լուծմանն ուղղված երկրորդ կարգավորումը պետք է լինի վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունված վճռաբեկ բողոողքների Datalex կայքում տեղադրելը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում դռնփակ կարգով քննվող գործերի: Նշված կարգավորումը նույնպես կնպաստի վճռաբեկ դատարանի գործունեության թափանցիկության բարձրացմանը:

Ելնելով վճռաբեկ դատարանի դատավորների ծանրաբեռնավածության նվազեցման անհրաժեշտությունից՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի առկայության հարցը պետք է լուծվի ոչ թե առնվազն տվյալ պալատների անդամների կեսի (իսկ գործնականում ամբողջ պալատի կազմի) կողմից, այլ տվյալ դատավորի և ևս երկու դատավորի կողմից: Նշված որոշումը վերջնական է, և ենթակա չէ բողոքարկման:

Ելնելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու բովանդակային հիմքերը կատարելագործելու անհրաժեշտությունից՝ անհրաժեշտ է սահմանել, որվճռաբեկ դատարանը վարույթ է ընդունում ներկայացված բողոքները միայն երկու դեպքերում՝

ա. դա անհրաժեշտ է վճռաբեկ դատարանի ՀՀ Սահմանադրության 92-րդ մասի 2-րդ մասով սահմանված սահմանադրական գործառույթի՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար:

բ. դա անհրաժեշտ է արդարադատության բուն էությունը խաթարող դատական սխալների վերացման համար: Այս հիմքով վճռաբեկ դատարանը ներկայացված բողոքներն ընդունում է վարույթ, եթե բողոքը վարույթ ընդունելու հարցի լուծման ժամանակ հիմնավորվում է, որ ստորադաս դատարանը ենթադրաբար թույլ է տվել նյութական կամ դատավարական բնույթի այնպիսի հիմնարար խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Ուստի անհրաժեշտ է որպես առանձին հիմք վերացնել երկրորդ հիմքը՝ (վերանայվող դատական ակտն առերևույթ (prima facie) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշմանը) այն ներառելով առաջին հիմքի մեջ:

Անհրաժեշտ է սահմանել այն դեպքերը, երբ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և դատավարական օրենքներում սահմանել ծանր հետևանքներ առաջացնող առերևույթ դատական սխալների ոչ սպառիչ ցանկ կամ տալ դրանց որոշման չափանիշները:

Այսպես վճռաբեկ բողոքը օրենքի միատեսակ կիրառության նպատակով վարույթ պետք է ընդունվի, եթե՝

1) նույն հարցի վերաբերյալ առկա են ստորադաս դատարանների առնվազն երկու միմյանց հակասող վճիռներ կամ որոշումներ.

2) նույն հարցի վերբերյալ առկա են ստորադաս դատարանի և Եվրոպական դատարանի երկու միմյանց հակասող վճիռներ կամ որոշումներ.

3) վերանայվող դատական ակտն հակասում է Սահմանադրական դատարանի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմանը.

4) վերանայվող դատական ակտն հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին.

5) ստորադաս դատարանը հիմնվել է Եվրոպական դատարանի որոշումների հիման վրա՝ չկիրառելով ՀՀ օրենքները.

6) վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավակիրառ պրակտիկայի զարգացման խնդիր:

Յուրաքանչյուր դատավարական օրենքում անհրաժեշտ սահմանել դատավարական օրենքի նման խախտումների այպիսի սպառիչ ցանկ, որոնց առկայության դեպքում ներկայացված բողոքները պետք է ընդունվեն վարույթ՝ միաժամանակ տալով գործի ելքի վրա ազդող ակնհայտ դատավարական խախտման հասկացությունը:

Ինչ վերաբերում նյութական օրենքի խախտմանը, ապա այն պետք է ընդունվի վարույթ, եթե

1. Այդ խախտումն իր բնույթով ակնհայտ է, այսինքն այդ բողոքի ուսումնասիրությունից բխում է, որ ստորադաս դատարանը ենթադրաբար թույլ է տվել նյութական նորմի այնպիսի խախտում՝ ի պաշտպանություն, որի չի կարող բերվել որևէ ողջամիտ փաստարկ

2. Այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա, այսինքն այդ նյութական նորմը չկիրառվելու կամ այլ մեկնաբանությամբ կիրառվելու դեպքում գործն այլ ելք էր ունենալու(եզրափակի մասն այլ էր լինելու):

Առաջարկվում է սահմանել, որ վճռաբեկ բողոքն օրենքով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու վճռաբեկ դատարանը կայացնում է հետևյալ որոշումները.

1.վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին: Այդպիսի որոշում կայացվում, երբ վճռաբեկ բողոքը բերել է այն անձը, ով չուներ այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է, կամ բողոքարկվել է բողոքարկման ոչ ենթակա դատական ակտը, վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել:

2.վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին՝ թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար, նման որոշում կայացվում է, երբ վճռաբեկ բողոքը ստորագրված չէ, բողոքին կցված չէ սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը, բողոքին կցված չէ պատճենը՝ գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները, պարզ չէ, թե որ դատական ակտն է բողոքարկվում:

3. վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը մերժելու մասին, եթե բացակայում են այն վարույթ ընդունելու բովանդակային հիմքերը, այն է՝ այդ հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար կամ ստորադաս դատարանը չի թույլ տվել ակնհայտ նյութական կամ դատավարական խախտում, որը կազդեր գործի ելքի վրա:

Վերը նշված առաջարկություններն իրագործելու համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել ինչպես ՀՀ դատական օրենսգրքում, այնպես էլ դատավարական օրենսգրքերում:

Ակնկալվող արդյունքը.

Նշված նախագծերն ընդունվելու դեպքում կկատարելագործվեն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու բովանդակային հիմքերը, դատավության

մասնակիցների համար ավելի պարզ և կկանխատեսելի կդառնա որոշելը, թե ինչու կոնկրետ դեպքում վճռաբեկ բողոքն ընդունվեց վարույթ կամ դրա ընդունումը մերժվեց, կվերացվեն մի շարք թերություններ, կիջեցվի վճռաբեկ դատարանի դատավորների ծանրաբեռնվածությունը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի կամ եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԱՆ ՄԱՍԻՆ

«ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի նախագծերի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է: